28րդ գնդի երկու գումարտակ. Բարդուսում՝ 28րդ գնդի մէկ գումարտակ և 20րդ գնդի մասեր. Խորոսանում՝ 12րդ դիւիզիայի սպայակոյտը — հրամանատար Խալիլ բէյ. Զիւինում՝ 34րդ գունդը. Քեոփրիքէոյում՝ 35րդ գունդը. Ալաշկերտում՝ 36րդ գունդը: Օլթիի ուղղութեամբ շարժւում էր Խալիդ բէյի երրորդ դիւիզիան — 7, 8 և 11րդ գնդերը: Տրապիզոնի և Էրզրումի միջև նկատւած էին 31րդ դիւիզիայի մասերը: 11րդ դիւիզիայի կենտրոնը, ինչպէս և 18րդ գունդը՝ Բայազէտում. 32րդ գունդը՝ Վանում. 30րդ գունդը՝ Բայազէտ–Արչայում: Բացի այդ Մերզեվանի շրջանում կային 1200 հոգի անկանոն կուսակներ. Օլթիում՝ 350 ժանդարմներ. Օլթիից դէպի հիւսիս՝ 1500 հոգինոց չէթա. Հասան–Ղալայում՝ 1600 կամաւորներ. Տրապիզոնում՝ 300 ժանդարմներ. Լազիստանում՝ լազ կամաւորներ:

«Թան»–ի զինուորական թղթակցի ասելով, 1920թ. ամառւայ վերջը, արևելեան նահանգներում թիւրքերն ունէին 3րդ, 13րդ և 15րդ կորպուսները ընդամենը՝ 50,000 հետևակ, 2,600 այրուձի և 306 հին ձևի թնդանօթ: Ուրիշ զինուորական հեղինակութիւններ Հայաստանի դէմ գործող թիւրք բանակը ցոյց էին տալիս՝ 3րդ, 9րդ, 11րդ, 12րդ և խառն դիւիզիաները, երկու աշիրէթական գնդեր, մի բրիգադ այրուձի, այսպէս կոչւած ադրբէջանեան ձիաւոր հարիւրեակը, թրքական և քրդական հրոսախմբեր և այլն: Կանոնաւոր զօրքերի թիւը հասնում էր 28,000–ի, որից 3,000 ձիաւոր: Զօրքը պարենաւորւած էր շատ լաւ, ունէր առատ ռազմամթերք, տաք հաղուստ, որ ստանում էր իտալացիներից, ֆրանսացիներից և Խորհրդ. Ռուսաստանից:

Նման անհաւասար պայմաններում սկսւեց պատերազմը: Հայաստանը լարեց իր բոլոր ուժերը: Սեպտ. 30–ին, կառավարութիւնը արտակարգ նիստում, երկիրը յայտարարեց զինուորական դրութեան մէջ: Մինչև 35 տարեկանները զէնքի տակ առաւ: Խիստ օրէնքներ սահմանեց դասալիքների դէմ: Զինուորական նախարարութեան տւեց արտակարգ լիազօրութիւններ, նրան ենթարկեց երկաթուղիները, ռադիո–կայանները և փոխադրութեան միջոցները: Որոշեց, արագացնելու համար կառավարութեան գործունէութիւնը և շրջաններում հեղինակաւոր ներկայացուցիչներ ունենալու նպատակով, նախարարների մի մասին և մի շարք գործիչներ ռազմաճակատ և գաւառներ ուղարկել: Ալեքսանդրապոլ ուղարկւեցին Ա. Ջամալեանը և Գ. Ղազարեանը, Կարս՝ Ս. Վրացեանը և Ա. Բաբալեանը, Սուրմալու՝ Ս. Արարատեանը, Ղազախ՝ Ա. Գիւլխանդանեանը, Նոր–Բայազէտ՝ Ս. Մելիք–Եոլչեանը, Աշտարակ՝ Խորհրդարանի անդամներ՝ Ց. Տէր–Ցակովբեանը և Հ. Տէրտէրեանը: Կենտրոնում մնացին՝ Հ. Օհանջանեանը և Ռ. Տէր–Մինասեանը: Կառավարութիւնը մի սրտառուչ կոչ ուղղեց ժողովրդին: Զինուորական նախարարի հրամանով Երևանի և Կարսի հրապարակներում կանգնեցրեց կախաղաններ: Կառավարութեան հետ միասին ամբողջ երկիրը ևս լարում էր իր ուժերը դիմադրելու համար իր թշնամուն:

Արտասահմանեան հասարակութեան մէջ այն կարծիքն է տիրում, որ թիւրքերը, առանց որևէ արգելքի հանդիպելու, յաղթեցին հայերին, որ